

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 48/5

20 նոյեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Բեյ Վինդոու» ՓԲԸ 19.10.2015 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302078/03 որոշման դեմ:

«Բեյ Վինդոու» ՓԲԸ գանգատում բերված փաստարկները.

«Բեյ Վինդոու» ՓԲԸ տնօրենը հայտնում է, որ 10.10.2015 թ-ին կայացվել է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302078/03 որոշումը, որի համաձայն իր կողմից օրենքով սահմանված ժամկետում չի ներկայացվել 2015 թ-ի հունիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը:

Գանգատաբերը հայտնում է նաև, որ ընկերությունը մինչև հունիս ամիսը գործունեությունը դադարեցրած է եղել, ուստի եկամտային հարկի հաշվարկ ներկայացնելու պարտավորություն չի ունեցել:

Ելնելով վերոգրյալից՝ Գանգատաբերը խնդրում է վերացնել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302078/03 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 25.09.2015 թ-ի 890 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Բեյ Վինդոու» ՓԲԸ տնօրենը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015 թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը: Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի կողմից 10.10.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302078/03 որոշումը (այսուհետ նաև Որոշում) «Բեյ Վինդոու» ՓԲԸ տնօրենի նկատմամբ վարչական տույժ նշանակելու, այն է՝ 20.000 դրամի չափով տուգանք կիրառելու մասին:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ «Բեյ Վինդոու» ՓԲԸ-ի կողմից 23.10.2014 թ-ին հայտարարություն է ներկայացվել Մաշտոցի ՀՏ՝ 23.10.2014 թ-ից գործունեությունն անորոշ ժամանակով դադարեցնելու վերաբերյալ: Այնուհետև,

ընկերության կողմից 24.07.2015 թ-ին դիմում-հայտարարություն է ներկայացվել Մաշտոցի ՀՏ՝ 25.07.2015 թ-ից գործունեությունը վերսկսելու վերաբերյալ:

Տվյալ դեպքում «Բեյ Վինդոու» ՓԲԸ-ն գործունեությունը 25.07.2015 թ-ից վերսկսելու պայմաններում պարտավոր էր 2015 թ-ի հուլիս ամսվա համար ներկայացնել եկամտային հարկի հաշվարկ, ինչը և նրա կողմից սահմանված ժամկետում կատարվել է: Այսինքն, «Բեյ Վինդոու» ՓԲԸ տնօրենը վարչական պատասխանատվության է ենթարկվել 2015 թ-ի հուլիս ամսվա եկամտային հարկի հաշվարկը չներկայացնելու համար, այն դեպքում, երբ նշված հաշվարկը սահմանված ժամկետում՝ 20.08.2015 թ-ին, ընկերության կողմից ներկայացվել է:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պատասխանատվության միջոցը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ զանցակազմը լիարժեք չէ, արարքի սուբյեկտիվ կողմի՝ մեղքի բացակայության պատճառով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ր ո շ ու մ է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 10.10.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 302078/03 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



ՎԱՐՉՈՒՄՅԱՆ

